

ԱՍՄՈՒՆՔԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ 8-ՐԴ ՄՐՑՈՒՅԹ-ՓԱՌԱՏՈՆԻ
ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանի հովանու ներքո անցկացվող <<Աամունքի հանրապետական մանկապատանեկան 8-րդ մրցույթ-փառատոն>>-ն այս անգամ նվիրվում է Ամենայն հայոց բանաստեղծ՝ Հովհաննես Թումանյանի և Ավետիք Բասիակյանի հոբելյաններին: Փառատոնն անցկացվելու է Հայաստանի բոլոր մարզերում, Երևանում, Արցախում, Վրաստանում և Ջավախքում:

Փառատոնը անցկացվում է ՀՀ տարածքային կառավարման նախարարության հետ համատեղ:

«Մեր լեզուն՝ մեր հայրենիքն է» – Ավետիք Բասիակյան

Փառատոնի մեկնարկը՝ առաջին փուլ- սեպտեմբերի 10-ից հոկտեմբերի 10-ը

Փառատոնի մարզային 2-րդ եզրափակիչ փուլի մեկնարկը՝ հոկտեմբերի 10-ից նոյեմբերի 25-ը

ՄԱՐԶԵՐ ԱՅՑԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

- 1.Արարատի մարզ-
- 2.Արմավիրի մարզ-
- 3.Արագածոտնի մարզ-
- 4.Արցախ-Ստեփանակերտ –
- 5.Գեղարքունիքի մարզ-
- 6.Կոտայքի մարզ-
- 7.Վայոց ձորի մարզ-
- 8.Լոռու մարզ- Դսեղ գյուղ
- 9.Սյունիքի մարզ –
- 10.Տավուշի մարզ-
- 11.Շիրակի մարզ-
- 12.Ջավախք –
- 13.Երևան- Հովի. Թումանյանի տուն-թանգարանում

ԵՐՐՈՐԴ ԵԶՐԱՓՄԱԿԻՉ ՓՈՒԼԸ- տեղի կունենա – Երևան քաղաքում կամ Լոռու մարզում- նոյեմբերի վերջին:

Գալա-համերգը և մրցանակաբաշխության արարողությունը՝ հանրապետական եզրափակիչ փուլի հաջորդ օրը-----

Փառատոնի անփոփոխ պատվավոր նախագահն է ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը

Փառատոնի ժյուրիի նախագահն է ԱԺ կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերով մշտական հանձնաժողովի նախագահ Արտակ Դավթյանը

ՓԱՌԱՏՈՆԻ ԺՅՈՒՐԻԻ ԿԱԶՄԸ

1. Տաճատ Վարդապետյան - ԱԺ պատգամավոր
2. Կարո Վարդանյան - գրականագետ, բան. գիտ. թեկնածու, Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարանի տնօրեն, բանախոս.
3. Սամվել Մուրադյան - բանախոս, բան. գիտ. թեկնածու, ԵՊՀ հայ գրականության ամբիոնի վարիչ, դոկտոր- պրոֆեսոր
4. Գուժ Մանուկյան - ՀՀ ժող. արտիստ, Հր. Ղափլանյանի անվ. դրամատիկական թատրոնի բեմադրիչ և դերասան
5. Ավիկ Իսահակյան – Գրականագետ, ԳԱԱ Գրականության ինստիտուտի տնօրեն, բան. գիտ. թեկնածու. պրոֆեսոր
6. Ռազմիկ Դավթյան – բանաստեղծ
7. Արտաշես Բախշյան - ՀՀ տարածքային կառավարման նախարարություն. փոխնախարար, գիտ. թեկնածու
8. Անետա Երզնկյան – ԵԿԹ պետական ինստիտուտի դեկան, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր
9. Սարգիս Նաջարյան – ՀՀ վաստակավոր արտիստ, «Կոմիտաս» ոսկե մեդալի շքանշանակիր, ասմունքի վարպետ
10. Էվելինա Շահիրյան – ՀՀ վաստակավոր արտիստ, Հր. Ղափլանյանի անվ. դրամ. թատրոնի առաջատար դերասանուհի

11. Լուիզա Ղամբարյան – ՀՀ վաստակավոր արտիստ, Հր. Ղափլանյանի անվ. դրամ. թատրոնի առաջատար դերասանուհի

12. Ջուլիետա Բաբայան – Գ. Սունդուկյանի անվ. մայր թատրոնի առաջատար դերասանուհի

13. Գարիկ Չեպչյան – Գ. Սունդուկյանի անվ. մայր թատրոնի առաջատար դերասան

14. Եղիշե Խերանյան – Բեմադրող ռեժիսոր

15. Մարիետա Մակարյան – փառատոնի ծրագրի հեղինակ և պատասխանատու քարտուղար

Փառատոնի օրերին ժյուրիի պատվավոր հյուրերը կլինեն գրականագետներ, գրողներ, ասմունքողներ, դերասաններ և այլք:

ՓԱՌԱՏՈՆԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Այս փառատոնի նպատակը խիստ արդիական է՝ փորձել երիտասարդ սերնդի ուշադրությունը կրկին բևեռել հայ անաղարտ գրականությանն ու պոեզիային, վեր հանել ասմունքի հարուստ ավանդույթները: Մեկ անգամ ևս անդրադառնալ գրողների թողած գրական հարուստ ժառանգությանը:

Մրցույթ-փառատոնը կանցկացվի երեք փուլով:

Ասմունքի հանրապետական նախորդ մրցույթներում արդեն մրցանակների արժանացածները չեն կարող մասնակցել այս մրցույթ-փառատոնին:

Տարիքային բաժանումն անհրաժեշտ է մասնակիցների գնահատման չափանիշները հստակ պահպանելու և հետագայում կազմակերպվող ասմունքի փառատոնների համար ասմունքողների հետաքրքրությունը ավելացնելու նպատակով: Մասնակիցները կբաժանվեն երկու տարիքային խմբի՝ 11-14 և 15-17 տարեկան՝ առանց բացառությունների:

Ամեն մասնակից ելույթի համար ընտրում է պարտադիր երկու ստեղծագործություն ներկայացված գրողներից՝ իր ցանկությամբ, որոնց տևողությունը չպետք է գերազանցի երկու (2) րոպեն:

Առաջին փուլ- նախնական ընտրություն- սեպտեմբերի 10-ից հոկտեմբերի 10-ը

Առաջին փուլի կազմակերպումը ենթադրում է փառատոնի կազմակերպիչների, Երևանի, Արցախի, Ջավախքի և մարզկենտրոնի մշակույթի և կրթության բաժինների, ինչպես

նան մարզերի քաղաքների և գյուղական համայնքների ղեկավարների սերտ համագործակցությունը:

Պարտադիր ընդգրկվում են մարզի բոլոր քաղաքների և համայնքների դպրոցները, կազմակերպվում է նախնական ընտրություն: Մասնակիցների թվաքանակը և կատարված ստեղծագործությունների անվանումը տեղում ամփոփվում և ներկայացվում է մարզի համապատասխան բաժնին կամ վարչությանը:

Նախնական հաշվարկով, երկրորդ մարզային փուլին կարող են մասնակցել մինչև 40 մասնակից, այսինքն, ամեն տարիքային խմբից 20 ասմունքով:

Յուրաքանչյուր մարզ 2-րդ փուլի մասնակիցներին ողջունելու համար կարող է հրավիրել նախորդ փառատոներում մրցանակային տեղ գրաված ասմունքողների:

Երկրորդ փուլ -Երկրորդ փուլին մասնակցում են առաջին փուլի հաղթողները: Քաղաքների, մարզի կրթության և մշակույթի բաժնի կողմից նախապես կազմվում են մասնակիցների ցուցակները, որում պարտադիր նշվում է մասնակցի անունը, ազգանունը, գյուղը, տարիքը և երկու ստեղծագործությունների անվանումը: Պատրաստվում է մասնակիցների ցանկ՝ 9-11 օրինակից, ժյուրիի անդամների համար:

Մարզկենտրոնում կազմավորվում է մարզային ժյուրի՝ 2 անդամով /մարզի ղեկավարության հայեցողությամբ/, որոնց կմիանան մրցույթի անցկացման օրը ընդհանուր մրցույթ-փառատոնի ժյուրիի անդամները:

Մարզպետները համարվում են ժյուրիի պատվավոր անդամ:

Մարզերում աշխատանքները հստակ կազմակերպելու նպատակով ընտրվում է պատասխանատու քարտուղար:

Վիճահարույց հարցի դեպքում ժյուրիի նախագահի որոշումը վերջնական է:

Մարզային եզրափակիչ փուլերի ընթացքում անվանի դերասանները, ասմունքողներն ու բանախոսները կվարեն վարպետության դասեր, կներկայացնեն գրողների կյանքն ու ստեղծագործական ուղին, թողած հարուստ ժառանգությունը:

Երկրորդ փուլում մարզերի ղեկավարության հայեցողությամբ փառատոնի ժյուրիի հետ համատեղ կարող է սահմանվել մարզային փուլում հաղթողների համար մարզային մրցանակներ, հանձնվեն նվերներ՝ չմոռանալով նաև պարգևատրել առավել ակտիվ ուսուցիչներին ու կազմակերպիչներին:

Երրորդ եզրափակիչ փուլին մասնակցելու իրավունք են ստանում մարզային եզրափակիչ փուլում ամեն տարիքային խմբից լավագույն առաջին երեք տեղ զբաղեցրած մասնակիցները: Այսինքն, հանրապետական եզրափակիչ երրորդ փուլին ամեն մարզից կմասնակցի 2 տարիքային խմբերից երեք /3/ ասմունքող՝ 1-ից 3-րդ տեղեր զբաղեցրածները, ընդհանուր թվով վեց /6/ հոգի, նաև եթե ընտրվել է լրացուցիչ մասնակից՝ ամենակրտսեր տարիք:

Երրորդ եզրափակիչ փուլ

Եզրափակիչ փուլը կկայանա Երևանում կամ որևէ մարզում:

Ներկայացվող ստեղծագործության տևողությունը խիստ սահմանափակ է, ոչ ավել քան երկու /2/ րոպե:

Եզրափակիչ փուլում մասնակիցների ելույթը կգնահատի 11 հոգուց բաղկացած ժյուրին, որի կազմում կընդգրկվեն անվանի արտիստներ, ասմունքի վարպետներ, պոետներ, գրողներ, գրականագետներ:

Որպես փառատոնի ժյուրիի պատվավոր անդամ /ըստ ցանկության, առանց քվեարկելու իրավունքի, դիտորդի կարգավիճակ/ կարող են գործուղվել և մասնակցել եզրափակիչ փուլին մարզային ժյուրիի մեկ անդամ:

Վիճահարույց հարցերի դեպքում ժյուրիի նախագահի որոշումը վերջնական է:

Երրորդ եզրափակիչ փուլն ավարտվելուց հետո կհայտարարվեն հաղթողների անունները և ըստ տարիքային խմբերի տեղի կունենա գալա համերգի երկու փորձ, որից հետո՝ մրցանակների հանձնման արարողությունը:

Նախատեսվում են հետևյալ մրցանակային տեղեր՝ ըստ տարիքային խմբերի.

1. Մեկ Գրան Պրի

2. Մեկական առաջին տեղ՝ 11-14 և 15-17 տարեկան

3. Մեկական երկրորդ տեղ՝ 11-14 և 15-17 տարեկան

4. Մեկական երրորդ տեղ՝ 11-14 և 15-17 տարեկան,

5. Խրախուսական մրցանակներ՝ 30 մասնակից

Մրցանակները կհանձնեն փառատոնի պատվավոր նախագահ, ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը, անվանի արվեստագետներ, գրողներ, քաղաքական գործիչներ, մանկական և պատանեկան մրցաշարերում հաղթանակած մրցանակակիրներ:

Գալա-համերգի ընթացքում փառատոնի մրցանակակիրներին կողջունեն նաև անվանի արտիստներ, երգիչներ: Բոլոր մարզերում փառատոնի փուլերի ընթացքում կլինեն ասմունք, ճանաչողական բնույթի այցելություններ գրողների տուն-թանգարաններ ու հարգանքի տուրք նրանց հիշատակին:

Նախատեսվում է

1. Փառատոնի մարզային երկրորդ եզրափակիչը մեկնարկել հոկտեմբերի 11-ին՝ Լոռու մարզի Դսեղ գյուղում, Հովհ. Թումանյանի ծննդավայրում: Գրողի հուշարձանին ծաղիկների դրման արարողություն, այց՝ Թումանյանի գերեզման ու տուն-թանգարան: Դսեղի մշակույթի պալատի դահլիճում անցկացնել մարզային եզրափակիչ փուլը:
2. Երևանի եզրափակիչ երրորդ փուլը առաջարկում եմ անցկացնել Հովհ. Թումանյանի անվան տուն-թանգարանում:
3. Հանրապետական եզրափակիչ փուլը և գալա համերգը՝ Երևանում կամ որևէ մարզում:
4. Մարզային փուլերի սկիզբը՝ այց տվյալ մարզի հերոսների հուշարձան, ծաղիկների տեղադրում, հարգանքի տուրք:
5. Եզրափակիչ փուլի մասնակիցների այցը կազմակերպել Ավ. Իսահակյանի և Հովհ. Թումանյանի տուն-թանգարաններ:
6. **Մրցանակներ՝ 1 Գրան-Պրի, 2՝ առաջին, 2՝ երկրորդ, 2՝ երրորդ, 1՝ ամենակրտսեր մասնակից և 30՝ խրախուսական, ընդամենը՝ 38 մրցանակակիր:**

Փառատոնի ծրագրի հեղինակ և պատասխանատու քարտուղար՝ Մարիետա Մակարյան